Արձանագրություն N 2

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/16>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03.09.2019թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Աշ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Ադամյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 27.08.2019թ., ժամը 11:45-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 9 800 000 (ինը միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ	ք. Երևան Բուզանդի 1/3	7 416 667	1 483 333	8 900 000
2	<<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ	ՀՀ ԼՄ ք. Վանաձոր, Վարդանաց 17-5	7 700 000	-	7 700 000
3	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ համատեղ	ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36 ՀՀ ք. Երևան, Բաղյան փող. 1-ին նրբ. 6/6	8 100 000	1 620 000	9 720 000
4	<<Լյուսաշ>> ՍՊԸ և <<ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ>> ՍՊԸ կոնսորցիում	ք. Երևան, Վարդանանց 10 բն. 39 ք. Երևան, Շիրազի փ. 20շ. 24 բն	8 870 000	-	8 870 000

դ) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշել է կասեցնել 27.08.2019թ. նիստը և հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.2 30.08.2019թ. կայացած նիստին գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

ա) <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N1-ի 3-րդ կետում նշված աշխատակիցների քանակը տառերով և թվերով չի համապատասխանում միմյանց:

գ) <<Լյուսաշ>> և <<ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ>> ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում

1) Հավելված N1-ի 2-րդ կետում նշված չէ Արմեն Գրիգորյանի հայրանունը, իսկ 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 10 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 13 (կամ 12) աշխատակիցների փոխարեն,

2) բացակայում են հրավերով պահանջվող <<Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)>> լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր,
- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր,
- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր,
- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր
- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել վերը նշված կազմակերպություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, իսկ հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո, բայց ոչ ուշ, քան 03.09.2019թ.:

1.4 <<Լյուսաշ>> և <<ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ>> ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից, որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել:

Քանի որ <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ի կողմից Հավելված N1-ի 3-րդ կետում նշված աշխատակիցների քանակը գերազանցում է հրավերով սահմանված պահանջին (13 կամ 12-ի փոխարեն ներկայացվել է 23 աշխատակից), գնահատող հանձնաժողովը վերը նշված կազմակերպության վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունը համարում է ոչ էական:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի, <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի համատեղ և <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար, իսկ <<Լյուսաշ>> ՍՊԸ և <<ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ>> ՍՊԸ կոնսորցիում հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ	բավարար
2	<<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ	բավարար
3	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ համատեղ	բավարար
-	<<Լյուսաշ>> ՍՊԸ և <<ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ>> ՍՊԸ կոնսորցիում	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին, ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա

ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Աշ. Գրիգորյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան